

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՕՐ", Ի

ՆԱՍՏԱԿ ԿԱՍ ՈՐ ԵՒ Է ՔՂԹԱԿՅՈՒԹԻՒՆ

ՊԵՏԻ Է ՈՒՂՂԱՆ ԱՌ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լուսարի

ԳՍՀԻՐԷ

Նամակառուի Թիւ 117

DIRECTION DU JOURNAL

NOR-OR

CAIRE, B. P. N° 117

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Ք Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆ-ԲՆԹԵՐՅՈՍՈՆ

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Է Գ Ի Պ Տ Ո Ս

Գանձեթի նամար	Տարեկան	50	
"	"	Վեցամսեայ	30
Շրջակայից	"	Տարեկան	60
"	"	Վեցամսեայ	35

ԱՐՏԱՍԱԶՄԱՆԻ ՇԱԲԱԹ

Տարեկան	Յրանց	18
Վեցամսեայ	"	10

ՌՈՒՍԻՈՅ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՇԱԲԱԹ

Տարեկան	Բուրի	7
Վեցամսեայ	"	4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԷ ԿԱՆԵԿ Է

ԵՒ ԹՂԹԱՍԱՐԻ ՇԱԲԱԹ

Թերթին Վարչութեանը վրայ է:

ԱՂՔԱՏՆԵՐԸ

Միլիոններու, հարիւրաւոր ու հազարաւոր միլիոններու ահագին բանակ մը, սարածուած լեռներուն գագաթներն ու ձորերուն խորերը, դեռերուն ու ծովերուն եզերքները, կղզիներուն ծոցերը, դարերէ ի վեր կ'ընդ-բարչէ թշուառութեան ու զրկանքի ճնշող բեռը. քուն չունի գիշերները, հանգիստ չունի ցերեկները, կը քայլէ ու կը քայլէ, և ճամբան ծայր չունի. քրտինք, արիւն կը մտնէ. ինչո՞ւ. որպէս զի հեշտանքի ու յղիանքի մէջ, վերաբարձիք բարձրու վրայ քնացնէ մենաշնորհեալներուն փոքրամիտ, բայց բազմապահանջ դասը, որ տէրն է երկրագնդիս ու վարդը մարդկութեան ու կեանքի ճակատագրին:

Կա՛ր ժամանակ մը, ուր մարդկութիւնը կ'ապրէր հաւասար կեանքով ու հաւասար իրաւունքով. մարդ կը քաղէր իր աշխատանքի արդիւնքը, կը պահէր իր ընտանիքը, կը ծաղկեցնէր իր հայրենիքը. առանց նեղութեան կը ճարէր հացը, ինչպէս այսօր կը ծծէ միջնորդի ձրի օգը: Նախնիք ոսկեգար կ'անուանէին այս երջանկութեան շրջանը, որ տեղեւայնչափ ատեն որ քաղաքակրթութիւն ըստած հրէշ ստը չըբաւ անյրգով բնակարաններուն մէջ. նախ՝ քաղաքակրթութիւնն հկաւ յեղաշրջել երկրագնդին երեսը, ստեղծել սպիւրտ նոր պայմաններ, արծարծել նոր կիրքեր, նիւթել նորանոր դասեր, դուրս բերել նոր նոր պէտքեր, և, այսպէս, գրախաղ փոխել դժոխքի մը, գեհնի մը. . . . Կարելի է, առանց չափազանցութեան, ըսել թէ՛ քաղաքակրթութիւնը՝ մարդկութիւնն ազնուացնելու, բարձրացնելու, և զայն դէպ ի լոյս առաջնորդելու կոչուած բարիք մը, ճիւղալի՛ն հակասութեամբ, եղած է մայրը մշտտեւ չարիքներու: Քաղաքակրթութիւնը յաջորդեց նահապետական շրջանին, անընդմիջապէս կարգ ու օրէնքներ գծեց ընկերութեան համար: Քանի՛ ընդլայնեցին հաղորդակցութեան շրջանակը, նո՛յնքան սեղմեցին սպորտատի միջոցները. շահու տենչը բունեց սրտերուն մէջ, փառամարտիկները կուրացուց սուր աչքերը. նոր հորիզոններու, նոր ծովերու, նոր աշխարհներու խուզարկութիւնները՝ նոր բռնակալներու նոր առաջակներու, նոր մարդասպաններու ծնունդ տրուի ու ծնա՛ւ թշուառութիւնը . . . :

Թշուառութիւնն, ահա՛ մարդկութեան նըշանակութիւնը. աղքատները, ընդհանրապէս աւելի տաղանդաւորներ, բայց նո՛ւազ անխիղճ ու նուազ նիւթապաշտ, ալ սկզբան ցոյց տալ իրենց երիթացած կերպարանքը: Դարերուն՝ մեզի թո-

ղած ժառանգութիւնն է ան, սոցաւորութիւնը. հէք մարդկութեան մէկ գօս ոտար. ինչպէս ըսած է ողբարդայն Գուրեան, հայ ազգը՝ մեծ ու լայն բաժին մը ժառանգած է անկէ, ու աղքատութեան անձնաւորութիւնը, մարմնացումն եղած է դարերով ու դարերով: Պատմութեան էջերը թըղթատելու հարկ չ'կայ վկայելու համար թէ՛ մեր ազգին բովանդակ անցեալը՝ նախնաճոտ դրացիներու յարձակումներուն և ներքին անվերջանալի պառակտումներու շարք մը կը ներկայէ. սով, հալածանք, ջարդեր, ի վերջոյ կործանում. ահա՛ ամբողջ ազգային պատմութիւնը:

Իսկ հիմայ որ կը բողբոնք անխլանութեան, կամ աւա՛ղ, գերութեան տխուր շրջանը, հիմայ սոսկալի է կացութիւննիս. խո՛ր է ան վիհը, որ բացուեցաւ գերիին ու իշխողին, զրկեալին ու զրկողին, Հայուն ու Թուրքին միջև. բանտերը բացին այդ անդունդը, զոր ջարդերն եկան արիւնով լեցնելու. հայրենիք մ'ունինք աւերակ, ուր մեր մորթուած հայրերուն ու մայրերուն որդիները, թոռները, մատղա՛շ որբեր, ՚ի զուր կը թափառին, մանրիկ ձեռքերնին կը կարկառեն անցորդներուն, պատառ մը հա՛ց հայցելու. հայրենիք մ'ամայացած, ուր մեր մորթուած եղբայրներուն աչազիզ ընկերակիները, այսօր կ'ախարհացած այրիներ, իրենց հրդեհուած սնունդն մոխրակո՛յտը կը քրքրեն, կարծես հոն վնասուելու իրենց պաշտեցեալ սիրելիներուն ա՛ճիւնները Ու այս ամենէն յետոյ, կը մնայ մեզի գաղթելու հարկը, երթալ քաջկուտելու մեր կիսամեռ էութիւնը, և, քիչ յետոյ, հայրենիքի կարօտովը հալ ու մաշ մեռնելու, թաղելու ամեն իղձ ու ամեն յոյս, եզրիպտական աւազներուն տակ կամ նորաշխարհեան հակայ գործարաններուն գործընկերներուն ու մուխի՛ն մէջ . . . :

Ի՛նչ է այս. կեանք է այս մեր կեանքը: Սե՛, սե՛ է մեր ճակատագիրը, Հայի՛ր. քիչ մը թողունք մեր անհատական հոգերը, որոնք, իրօք, բաղմապատիկ են ու յարաճուն. սակայն թողունք պահ մը զանոնք ու իրարու մտենանք. խորհի՛նք, լրջօրէն խորհրդածե՛նք, ու եթէ դեռ մեր մէջ կան միամիտներ, որոնք ոսկի ծիրանի երազներով կ'օրորուին. զանոնք ալ բերե՛նք մտեցնե՛նք անդունդին ելերքին, նայի թո՛ղ, ու փորձէ թէ՛ պիտի կրնա՞յ չափել խորութիւնն անոր: Այո՛, թողունք ամեն բան, թողունք գձձութիւններն ու անիմաստ ատելութիւնները, հաւաքական ուժ մը կազմե՛նք ու ձեռնարկե՛նք, միջոց մը, դարման մը գտնելու, մեր ներկայ թշուառութեան վերջ մը գնելու համար: Ու միթէ՛ անկարելի բան կա՞յ ազգի մը զաւակներուն համար որոնք դարերու հալածանքի ու

չարչարանքի բովքին մէջէն անցած են. որդիներն ենք ա՛յն ազգին, որ, ձգե՛նք իշխանութեան շրջանները. նոյն իսկ գաղթականութեան մէջ, հիւրընկալուչ տէրութիւններու պատկառանքն ու համակրանքը վայելած է, շնորհիւ իր ստեղծող հանճարին ու ճկուն նկարագրին:

Ա՛րդ, ի՞նչ կը մնայ մեզ ընել, եթէ ո՛չ, դոյզն ճիգ մը, և պիտի տեսնենք որ չուտով պիտի միթարուին մեր անմխիթար համարին. քոյրերն ու եղբայրները, հուրէ սուրէ մաղապուր փախած եղկելիներ:

Այս ընդհանուր կացութիւնը նկարագրելէ յետոյ, գա՛նք մասնաւորելու մեր տեսութիւնները երկպառհայոց գաղթականութեան վրայ:

Մենք չ'պիտի խօսինք բոլոր ազգային շարժումներուն վրայ, որոնք տեղի ունեցած են ու կ'ունենան այս վերջին տարիներս. մէկ երկու խօսք միայն կուզենք ուղղել մեր Պատ. ընթերցողներուն, Գահիրէի «Աղքատախնամ»-ին համար որուն Ընդհ. ժողովը տեղի պիտի ունենայ վաղը, ինչպէս այսօրուան թիւով կը հրատարակէ նոյն ընկերութեան Մայր-Դիւանը:

Աղքատախնամ բառը կը բաւէ, բմբունել տալու համար կարեւոր դերը, զոր կոչուած է կատարելու այդ ընկերութիւնը. ո՛չ միայն Գահիրէի, այլ և բովանդակ եզրիպտոսին շրջակայքի հայերը պարտին անգամակցիլ անոր, համոզուած ըլլալով թէ՛ եղբայրական պարզ բայց նուիրական պարտականութիւն մը կատարած պիտի ըլլան անով. ու եթէ քիչ մ'աւելի աչքի առչկ բերենք յատուկ գիրքը, զոր ունի եզրիպտոս, բաղդատմամբ ուրիշ գաղթավայրերու, պիտի համարձակինք հրաւիրել բոլոր Արտասահմանի Հայութիւնը, հեռուէն իսկ մասնակցելու և սատարելու այս ընկերութեան, նկատի ունենալով որ Մայր-Հայրենիքէն բաժնուողները կամայ կամ ակամայ, մեծ մասամբ կամ աւելի այս կողմերը կ'ապաստանին քան թէ՛ Հնդկաստան կամ այլուր. ահա՛ պարագայ մը, որ աւելի կը շեշտէ Աղքատախնամի յարստեւ գոյութեան պէտքը:

Չը կարծուի սակայն թէ՛ մենք աւելցնել կուզինք թիւը դէպ ի հոս վաղուց կարգ մը բաղդախնդիրներու. ընդհակառակն, կը փափագինք մենք գործնական միջոցներով անկարելի դարձնել գաղթականութեան աճումը: Այդ միջոցները պիտի հայթայթէ անտարակալ Աղքատախնամ ընկերութիւնը, (եթէ վարչութիւնը քիչ չատ փորձ ու ձեռնհաս անդամներէ բաղկանայ, և հետզհետէ մաքրուի այնպիսիներէ, որոնք, բացարձակ ապուշներ, խօսիլ գիտեն, միայն խօսիլ. որոնք բանէ գործէ չեն հասկնար ու գիրենք մէկ մէկ Սողոմներ ու Լիկուրգոսներ

կը կարծեն), որ մեծ ապագայ կը խոստանայ այժմէն, ժողովրդին մէջ գտած համակրելի ընդունելութեամբը: Որինակի համար, հոս տուճմիկները ունինք բաւական թուով: ասոնք ապարաններու գոները զարնոյններն ալ քիչ չեն թըլուով: այդ զարնոյնները, անձանօթ գէմքեր, անկրես մուրացկաններ, ասանց խոյնելու կ'երթան կը սլքան մեր ջոկերուն պատերուն տակ, կը սպրդին ներս, ու կը յաջողին յաճախ դուրս ելնել գիրքմբռնելի փայտ մը շրթունքներն մինչդեռ սաղին, ո՛վ գիտէ ո՞ր կըսուած փոքրցին մտթ անկիւնը, խոնաւ նկուղի մը մէջ անօթի, հիւանդ ու անօր կը տառապի այլի մը, ջարդերէն մնացած, իր մատղաշ անմեղուկներով շրջապատուած: Ի՞նչ պժգալի ոճիր է այս, որ կը գործուի ամին օր:

(Շարունակելի)

ՈՐԲԱԽՆԱՄՆԵՐՈՒՆ

SURSUM CORDA!

Բարի քահանան, իր խցիկին ստուերներուն մէջ նստած, գլուխը վայրահակ իրրեւ ապաշխարութեան աղօթքի մը մէջ յարտասուս լուծանելով, խորին խորհուրդներու մէջ ընկղմած է: Շատ աղօտ լոյս մը կը թափանցէ այդ սենեկին միակ պատուհանէն ներս, ու կը լուսաւորէ հոն գտնուած տխուր առարկաները: Իր բազմոցին մօտ եղող փոքրիկ քառակուսի սեղանի մը վրայ դրուած քանի մը հնոտի գրքեր, հաւանօրէն ազօթազրք կամ աւետարան, աթոռակի մը վրայ մտնուած կճատ մը: գետնը զոյգ մը փոշեմած հողաթափ:

Իր մենարանին խորին լուծեանը մէջ, այդ մեծահոգի կղերականը, Տրոխնեան այրէն գոգցես դուրս ելած գէմք, լսելի կ'ընէ սա բառերը, որ դուրս կը հոսին իր կուրծքէն ինչպէս պիտի լսէինք այրափակ մոնազի մը իր փապարին ալքերէն բարձրացուցած խօսքերը, իսկ, ասարտած, անըմբռնելի, հատկեալ, հեծեւթքին:

« Ստակալի երազ մը տեսնողներն են անոնք, այդ խեղճ փոքրիկ աղածրի արարածները: Ո՞չ ապաքէն, իմ կակիծիս մէջ, քանիցս հարցուցի անոնց, ու անոնք չը պատասխանեցին ամէնքն ալ, մանկութեան կարմիր շրթունքներուն վրայ իրենց վիճակին բոլորովին անպատշաճ փայտ մը, անոյի փայտ մը ունեւալով: վասն զի շատ մատուցէ ինչ անոնք, երբ արհաւիրքները սեղի ունեցան, եւ հիմա հինգ վեց ձմեռներ անցան, հինգ վեց ձմեռներու ձիւնը եկաւ ծածկեց սոսկու մի տեսարանները եւ երբ մանաւանդ մանուկ է մարդ, հեռացած վիշտերը կը ջնջուին մեր սրտէն ալ մաքէն ալ: չպատասխանեցին:»

— Հայրս սպաննեցին. կա՛, տուներնիս հրգեհեցին ու բողանողական ընտանիքս հրոյ ճարակ եղան, եւ՛ հանրա հազիւ փամանակ ունեցաւ զիս զիրկը առած փախցուներու: կամ, աչքիս ասջիւ ծնողքս խողխողեցին: » Եւ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՁԱՆՈՐՄԱՆ

Շատ մը դասակարգերու օրինակելի սոյնորինակ կենցաղավարութեան մը հետեւանքը ընդհանրապէս բարեկեցութիւն էր: Ինչպէս որ ալ եղաւ այդ նորակազմ ընտանեաց համար Գառնիկ կ'ապրէր անձնական անկախութեամբ, մտքի հանդարտութեամբ եւ խղճի խաղաղութեամբ:

Մինչ այս մինչ այն տարին բոլորեցաւ եւ երկու ամուսիններն ունեցան իրենց անդրանիկ զաւակը՝ ներսէսը:

Այն ամեն ծովկերքի վրայ երկու տնեակով անիկ մը վարձած էին: Պատուհաններէն կը տեսնուէր Գառնիկի սպիտակահոնակ նաւակը, որ ստէպ կը նորոգուէր ու կը ձիւթուէր, եւ որ՛ երբ Գառնիկ տունն ըլլար՝ միզմիկ կ'օրորուէր: արանց վրայ շնջասպառ տարածուող կոնակներու զգուանքէն:

Գառնիկին իր փարոս կը ծառայէր այն խորրիկ տունը որ՛ ուրիշներէն անջատ՝ բաւական հեռու էր կը զանազանուէր իր պատուհաններուն կանաչանելի փեղկերուն շնորհիւ: Երբ նաւակը հասնելով կը խրէր աւազին վրայ ձկնորսը գլուխը կը վերցնէր եւ կը տեսնէր ամարը:

այս ամենը կ'ըսէին պարզապէս, բնական կերպով, իբրեւ թէ անաւոր կերպով տարօրինակ բան մը պատահած չըլլար:

Այդ քստմնելի երազէ մը, անգոհական երազէ մը արթնացողներն են անոնք:

Օրհնեա՛լ ըլլան անոնք որ հէք եղկելի որբերուն կը գթան:

« Մատաղափ փորձառուներն են կեանքին: Չէ՞ք տեսներ երբեմն անոնց խորունկ, մտախոհ, հեռաւոր նայուածքները, որ կարծես կը իշխն: Ու յայնժամ միջոցին մէ՛, անոնց շուրջը, ազեկեզ բան մը կը սահի կ'անցնի: արդեօք թափօրն է, արդեօք սրտաճմլիկ սոցաւնցութիւնն է այն անթիւ անհամար գոհերու, զոր մէք չենք տեսներ, բայց զոր անոնք կը դիտեն ակնապիշ:»

Երջանի՛կ ըլլան անոնց զաւակները, որ հէք եղկելի որբերուն կ'ողորմին:

Կը նմանին թաշուհներու մատղաշ ձագիւր՝ գոխաշունչ թխպայորդ պախրցիէ մը յանկարծ բոյներէն խուած յափշտակուած, մինչդեռ անոյի շունչը կ'առնէ կը տանի իրենց ծնողքը թեւաբախ ու անարեկ. եւ այդ ձագերը, ինկած ճամբուն վրայ, թեւերնին անգոր ի դուր կը բաբախեն կը թրթռան իր իր համեմուտ համար իրենց հայրերուն ու մայրերուն, զոր երազանոս անդիմադրելի հողմը ի քարշ կը վարէ: Ու հիմա, խեղճ ձագուկներ, փոքրիկ տազնայեալ սաղնիք կը ճուան ցաւի եւ անօթութեան: Եւ ճամբուն տատակները չեն գթար անոնց: Եւ ամպերը անոնց վերեւ կ'անցնին, անկարեկիր:

Երջանի՛կ ըլլան թուները անոնց որ հէք եղկելի որբերուն կը կարեկցին:

Եղուկ կակներն են անոնք, որ կը պատրաստուէին իրենց անօթութիւնը անցնելու համար, ու տեղ պատաս մը հայր զոր կը մատակարարէին իրենց արեւէն այրած ձեւերը, տաժանելի չարավատակութեան նուիրուած հողագործի ձեւերը: Եւ անա տեսան բոտորաների բազուկներ, որ այդ սննդաբեր ձեւերը յօշկնին եւ իրենց կալօտութեան հայր հափափեցին ասին տարին:

Օրհնեա՛լ ըլլան անոնք որ կը գթան հէք եղկելի որբերուն:

Ես քահանան եմ իմիջներու սուգն զգեցած: սեւեւ վերարկուս ցաւէն երթեացած մարմին մը կը ծածկէ: Ձեռքերս ու ծունդերս կողկոտու եղան կարծրացան սալացան Աստուծոյ աղօթելով աղօթելով՝ որպէս զի ողորմի իմիջներուս Գառնիկ պէս, անապատի հաւալուսի՛ նմանեցայ: Բայց մորմոքներս արեւնս ցամաքացուցին: Երբ ինձի գան անոնք, քաղցած ու ծարաւի, կաթիլ մը արիւն կա՞յ կուրծքիս մէջ որ անոնց առջեւ ճեղքեմ բանամ զայն Դեռ երիտասարդ, հոգիքն մազերս ճերմկցան: Ու փասպառ, հազիւ ունիմ ոյժ երկու քայլ անկելու: Սառը կը բնակի երակներուս մէջ: Աչքերս զրկեթէ կուրացան արցունք թափելէ: Ես կենդանիներուն մէջ մտեալն եմ, որ խաւարին փոքր ի՞նչ եմ՝ դեռ չլծաղուած:

Միշտ, եւ ձմեռը՝ երբ օդը ներէր, Մարիամը պատուհանին առջեւ, ներսէսը գիրկը բռնած: Կինը կը փայտէր եւ մանկիկը թօթօշիկ ու մանտրուակ թեւերը կը կարկուռէր:

Ժամանակ անցնելով Գառնիկ տունը կատարելապէս զարգարելէն ետքը՝ գնաց երկրորդ մակոյկ մը զոր յանձնեց իր ծանօթներէն Գարրիէլ անուն ձկնորսի մը, հաստիթ կրեւու պայմանաւ, եւ դարձեալ լեցուն պղտրիկ քաակ մ'ալ ունէր արկղիկի մը յատակը:

Ի մի բան երկու ամուսինք Երջանիկ էին Դժուարին է մանրամասնօրէն նկարագրել կը ջնջուէր ինչպէս նաեւ զժողովրդի մը որ աւելի ծածուկ խորհրդ ունի:

Այլ, աւաղ, կարծես թէ չարասէր ոգիներու լէգէններ միշտ կը գառնան մեր շուրջը առիթ մը գտնելու համար մեզի ներկայացնելու ապերձանութեան որումը, զոր մեք՝ անգիտակցութեամբ կամ անկատարութեամբ՝ յօծարակամ կ'ընդունինք եւ կը ցանկնք մեր ամենէն արգասաւոր անկիւնը, այն է մէր սրբուր, մեծ հոգ ու խնամք տանելով որ ձիւ, փթթի եւ պտուղ տայ:

Ներսէս մեծցած էր եւ մօրը բաղկացը մէջ յաջորդ մ'ունեցած: Սահակ ութն ամուսն էր երբ գիշեր մը հինգ վայրկեան աւելի լացաւ: Գառնիկ պատճառը հարցուց: Մարիամ պատասխանեց թէ ցորեկը ճնճուկ մը խայտահաւէ մը հալածուելով՝ պատուհանին ապակիին զարնուած եւ ընդոտ արթնցուցած էր Սահակը, որ նոյն միջոցին մարտիւն վրայ էր իր գրկացը մէջ: Մայրը

Բայց կայ բան մը որ կը զօրացնէ զիս, որ զիս կ'ողբուէր, որ ապրելուս գրեթէ կը ջանքի կը յարգարէ զիս, ու կարող կընէ զիս բսելու: Թէ ամեն բան լմնցած չէ: Այդ բանը մեծ միտքարութիւնն է համբաւին՝ թէ զթած հոգիներ կը զարգացուցնեն կը յօրինեն անտէրունչ որբերուն օգնութեան համեմուտ համար:

Անցեալ գիշեր, քսան օր առաջ, աստղերուն կը նայէի: Անոնց հոգին կը խօսէր ինձի: Հոգիս կը հասկընար զանոնք եւ կը խօսէր անոնց: Ինչ որ կ'ըսէի ինձի, ինչ որ հոգիս կ'ըսէր անոնց՝ աղօթքի մը պէս, չեմ կարծեր որ կարելի ըլլայ մարդու լեզուով թարգմանել:

Այդ աստղերէն մին սլացաւ ինկաւ մեծ անդունդին մէջ սրահու եւ լուսափաղիւ Հարցուցի թէ ուր կը գիւնէր: Ըսաւ ինձ թէ հոգի մը կ'երթար ըզոք բանալ անոք մնացած աղածրի մանուկներուն անլուր տառապանքին համար:

Օրհնեա՛լ անոնք որ կը գթան հէք եղկելի որբերուն:

Մտեալներուն քահանան եմ ես, այն որ պաշտօն ունի հոգեհանգստեան աղօթքներ մրմնջել անոնց վրայ: Այն օրը զի՛ս ասին տարին ու կեցուցին ընդարձակածաւալ փոսի մը առջեւ, որուն մէջ շեղջաշեղ կուտակուած էին ո՛րը խողխողուած, ո՛րը թոպամահ եղած, ո՛րը զլլատ, ո՛րը այրած, ո՛րը խեղդուած մարմիններ, ու ես ըսի անոնց հրաժեշտի գերագոյն ողջոյնը մայրերուն, ծաղկատի հարսերուն, ամենասիրելի քոյրերուն կողմէն, որ այդ լայն գերեզմանին եզրերը կեցած էին եւ կ'արձակէին վայնասուտներ այնպիսի որպիսիք չեն մոռցուիր յախտեան՝ երբ մարդ լսած է զանոնք, որ կը փետեկն մազերնին զորս հիւսիսի հողմը կ'անոնք կը տանէր, որ ծիրաններով կուրծքերնին խոշտանգիչ բանցի հարուածներով կը տանչէին, եւ որոց նայուածքները բարկութեան ու զայրութի արցունքներով կը վառէին:

Օրհնեա՛լ անոնք որ կը գթան հէք եղկելի որբերուն:

Ու մեծահոգի կղերականը, Տրոխնեան այրէն գոգցես դուրս ելած գէմք, լսելի կ'ընէ այս բառերը որ կը թուին իր կուրծքէն, ինչպէս պիտի լսէինք այրափակ մնաղի մը իր փապարին ալքերէն բարձրացուցած խօսքերը, խուլ, տարտամ, անըմբռնելի, հատկեալ, հեծեւթքին:

Յ. Ս.

Վ Ր Ի Պ Ա Կ

Նախորդ թիւ 8ի բանասիրականին մէջ սպրդած տպագրական վրիպակները կ'ուղղենք:

Գ. զլիտ Գ. սիւնակին Երբ տողին սկիզբէն, «բոս բաւականի»-էն յետոյ կարդալ. «ուրուական մը, երկնցած ամենախեղճ խշակի մը վրայ»: Գ. սիւնակին 3րդ տողին մէջ, «ողորային»-է վերջը կարդալ. «բայց»-ն նոյն սիւնակի 12րդ տողին մէջ «ձոյլ էր» կարդալ. «ձոյլ չէր»: Եւ 25րդ տողին մէջ՝ «որքանը» կարդալ «որոնք»:

Կը կարծէր որ Սահակին ներկայ վիճակը այդ վախիտ արդիւնքն էր: Ձկնորսը՝ համոզուած՝ չպատասխանեց. բայց այս խօսակցութեամբ թուր փախած ըլլալով, միայն աշխատելու սկսաւ: Յիշեց որ շարժեթ միջոց միւս մակոյկին հաշիւը կարգադրած չ'էր, եւ թէ երբ հաշիւ պահանջէր՝ Գարրիէլ խուսափողական պատասխաններու կը դիմէր, ինչ որ իրեն կասկածներ կուտար: Հետեւաբար զանցառութիւն ընելու չ'էր. մարդը՝ ըստ սովորութեան մակոյկով չ'եռացած՝ կանուխէն երթալու հետք խօսելու էր:

Արշալոյսը մօտեցած ըլլալով Գառնիկ ելաւ եւ ձայն չ'անելու ջանալով՝ զգուշութեամբ հագուեցաւ:

Բայց Մարիամ ալ արթուն էր, եւ երբ ձկնորսը սենեակէն դուրս ելելու վրայ էր

- Ո՛ւր կ'երթաս, հարցուց:
- Ա՛, գու չ'ի՞՞ք քանար, ըսաւ Գառնիկ:
- Ձգեցի՞ր որ քանարս:
- Ե՛ս, ես ի՞նչ ըրի:
- Ասդին անդին գառնալներովդ, կցկոտուր խօսքերովդ...
- Ետտ լաւ, հիմայ որ ես ելայ, ալ դուն քնացիր:
- Ո՛ւր կ'երթաս հարցուցի, պատասխան չտուիր:
- Դործ ունիմ, դուրս պիտի երթամ:
- Միթէ չ'ի՞՞ք կրնար սպասել որ լուսնայ:
- Լուսնալու մօտ է արդէն:
- Ըսել կ'ուզես թէ ե՛ս ալ ելեմ:

(Շարունակելի)

ԱՆՑԵԱԼԵՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԵՆ

(Շարունակութիւն անցեալ շաբաթ առաջ թիւէն վերջ)

Սասունի կոտորածը տեղի կունենայ, Հայաստանի եւ Պոլսոյ քառամեկի ոճիրները յաջորդաբար աշխարհ կը գործեցնեն՝ ամբողջ հայութիւնը թախծարից սուգի մէջ թաղելով: Սահմանադրութիւնը, արգէն աննպաստ միջավայրի մէջ հաստատուած, մահացու հարուած մը կ'առնու, մեր ազգաները, ու Բարեգործականի գործունեայ վարիչները, սուգի հաղուստներ հագած, կընդհատեն Մայրի Ձեռի փառաւոր տոնախմբութեան հանդէսը:

Հիւսա, սակայն, որ կամայ կամայ, գէթ արտասահմանի հայութիւնը՝ իր ցաւերը մոռցած ըլլալու ու նիւթապէս թէ բարոյապէս կազմուրուելու միտքարական նշաններ ցոյց կուտայ, կը սիրենք յուսալ որ այլեւս արգելք մը չկայ տոնախմբութեանը տարեդարձի մը՝ որ հայութեան փառք մը ստեղծելու բնոյթն ունի, հայուն այրած սրտին վարկեան մը կենդանարար սիրտիւնք մը հայթայթելով հանդերձ:

Փափաքելի է միանգամայն որ ազգային վարժարանը, գոնէ տարին մի անգամ, թէ չէ հանդիսաւոր մըրցանակաբաշխութիւն մը՝ գէթ ո՛ր եւ է հանդէս մը կազմակերպելու ընդունուած սովորութեանը մէջ պարտագանջ չկանուէր, որմէ ապահովաբար պիտի օգտուին թէ՛ աշակերտները եւ թէ՛ աշակերտաց ծնողքներ, առաջիններն ոգևորուելով մեր ծախահարութիւններէն՝ որոց թերեւս արժանի եղած չըլլան — եթէ ի նկատի առնուինք անվերջանալի արտունջները որ կը յուսին ամեն կողմէ վարժարանի դանդաղ քայլերու մասին — իսկ վերջիններ՝ առիթ մ'ունենալով մտնելու ու քիչ մ'ալ պարտաճանաչ ոգևորել հետաքրքրուելու իրենց զաւակներու յատկաբնութեան: Ստատագրականութիւն է սրղեօք, այսօրան տարրական պարտականութեան մը գործարարութեան պահանջով վարժարանի Պատ. վարչութիւնէն:

Ո՛հ, ասեմն է որ քիչ մ'ալ զբաղինք վարժարանով, հո՛ն փնտռենք մեր ապագայ սերունդի փրկութիւնը ու մեր յամբաքայլ գաղութին յատկաբնութեան ապահով շաւղը: Ո՛ր եւ զու, արգար ձա՛ն ժողովուրդի, ո՛ւր հմուտ գրիչներ . . .

— Մեզի ի նշ փոյթ վարժարանը, ո՛ւր մնաց հապա « Յատկաբնութեանը Ընկերութիւն » ք. պիտի հարցնէ անշուշտ նորիկ ընթերցողը:

Պատասխանը այնքան զերբին է՝ որքան բացորոշ Յատկաբնութեանը Ընկերութիւն, վարժարանը յայտն ո՛րքան չափազանցօրէն փառաբան ըստ Հայուն համար: Մեր գովելի բազմաբնութիւններով շարունակ ընածին յետադարձօրէն մէջ՝ աւերիչ ու թունալից ուտիճ մը, յետ մը սողուած ըլլալու է, որ աննպաստ քան ինչ կամ բաներ մ'ընկու ընդունակութիւնը ունենանք, իսկ հաւաքական հայրենասիրութեամբ՝ very little or nothing, ինչպէս կըսեն Անգլիացիները: Դաւաճանութիւն է միթէ մեր տոհմային թերութիւնները խոտովանիլ: Ո՛հ, Հայը՝ ընկերական մարդ ստեղծուած չէ՛, որչափ որ կարելի է գտնել անցեալին ու ներկային պերճաբար վրայակալներէն Hurrakh! Ընկերութիւններէն հին հիմնելու համար անվիճելի անպատշաճ մարմանքէն բռնուած ենք, մանաւանդ վերջին տարիներս, աշաւատայր հոսանք մ'է որ հրաբորբոք կը բռնկի սկիզբները՝ երբ հաւաքական բարեկամացող գործի մը ձեռնամուխ կըլլանք, կը տարակուսի՞ք արդեօք, անպատճառ, շատ չանցած՝ այնքան եռանդով, այնքան խոնաղով արտաբերուած սխտուած գործը՝ մեր իսկ ձեռքով տապալելու ճակատագրային վճռակարարութեամբ, ինչ որ պատահեցաւ Յատկաբնութեան համար: Սովորական կարճատե խանդէն վերջ՝ վնասութիւն, ձա՛ճրոյթ, անտարբերութիւն, անմարտնոթիւն, հասարկութիւն, շահագիտութիւն, կիրք, քէն ու դիւ — զո՛րն ասեմ կամ զորն խոտովանիմ — վերջապէս, ստորակազմերու յատուկ ամէն պէճալի բարբերը (վասակուութիւնը թերեւս բացառութիւն կազմելով հոս տեղ) նոյնքան շարժառիթներ եղան անոր կազմալուծման: Երեք տարի չտեւեց անոր ողորմելի գոյութիւնը, մարեցա՛ւ ան, կարծես դուժելու համար թէ՛ հայուն յայտնը ալ՝ անոր պէս շուտով մարելու անողորմ ճակատագրին պիտի նմարկուէին:

Կարեւոր թէ անկարեւոր մարտգութիւններ պարտաշուքին անխորճ քասկներ, իսկ 65 ոսկուց գումար մը, անոր գոյքերն զոյգած, որ ասեմ մը Առաջնորդարանի տրամադրութեան ներքեւ մնաց, կոտորածի պահուն Սասուն զրկուեցաւ՝ գոնորուն բաշխուելու համար:

Յարգանք յիշատակին ողբացեալ Պ. Սոսքանցի, ուսեալ ու եռանդուն երիտասարդ մը, ծանօթ իր հայրենասիրական ձգտումներով եւ «Արմէնիա» մէջ թշուառ պատանեկի մը համար իջնորդանի գէ՛մ, այն ասեմ Գափրէի թեմին առաջնորդ, մղած բուռն պայքարով, եւ որ միեւնոյն արդէն մեծ դերը խաղաց Յաղապարտութեան մէջ:

Այս հոգեւոյն Ընկերութեան հաստատութեան գրեթէ միեւնոյն տարին, քիչ մ'առաջ քիչ մ'ետք, լաւ չենք յիշեր, թերեւս առաջին անգամ ըլլալով Եղիպտոսի համար, ասարթի գործունէութիւն մը ցոյց արուիլ ուղուեցաւ: Կարգ մը ծանօթ եւ պատուաւոր Արարկիրցի հայրենակիցներ, որոնց վերջին միանալու էին սրբից երկրացի ազգայիններ, (ականջը իստի Իսմայիլիայի մեծակեցին) կը ձեռնարկէին ընկերութեան մը հաստատման, նպատակ ունենալով համազգային փոռ ո՛ւր նենալ, շահագործել ու՛ շահին մէկ մասով՝ կրթական գործին սատարել: Բարեկամացող ձեռնարկ, անանկ չէ՛: Փոռ կը բացուի վերջապէս, ո՛ր գիտէ Հայերու ու մասնաւոր խոտապահանջ զաւառացիներու սեփական ո՛րքան բանակցութիւններէ, բո՛խնդրութիւններէ, բանակերներէ ու անհասուն մեծակերպութիւններէ վերջ: Արդէ՛նք, ո՛հ, Աստուած իմ, արգիւնքը . . . Երկու տարին չորրորդ՝ խեղճ փառն ընկերութիւնը սնանկացած կը հաշակուի, ի մեծ զայթաղու թիւն ամենցուն: Գործադիր վարչական մարմիններու կողմանէ, ամենքն ալ, զարմանալի՛ լաւ, գործուն, փորձ՝ միլիոններու իսկ հաշուագիտութեան վարժ մարդիկներ, թերութիւններ, անհոգութիւններ տեղի ունեցած են, ինչո՛ւ չըսել «ես ու գուն» «իմ ու քու» կնճոռ խնդիրներ, յախտեանկան «խրոնի տիրանչիւն յանկերներ: Փոռն մէկ կամ աւելի պատշտականեր, Պատ. վարչութեան անհոգութիւններէն եւ անվերջանալի կորուստէն քաջալերուած, անհաստատութեան զէ՛մ մեղանշած կ'ըլլան, եւ անա պահանջատէր ալիքալուծուող կը ներկայանայ, խոռոռ նայուածքով, զգո՛ւ ած յոնքերով, զրգոզ saisieի մը պող պատգամը ձեռքը բռնած: Պարագանքերու բերմամբ՝ խնդրել հետզհետէ կը կնճոռաի, ու բողբոլ միջուկ գատուորին կը համար: Դատաւարութիւնը, կանոնագրի եւ այլեւայլ գրութիւններու թարգմանութիւնը ամիսներ կը տեւեն, եւ ի վերջոյ, վճիռը կ'արձակուի, աննպաստ, անողորմ՝ մեղաւորին ու անմեղին ալ համար, ամբողջ վարիչ մարմիններէն ամէն մէկը 35 ոսկի տուգանքի վճարման դատապարտելով: Կ. Սարգսեան, Գործ. Ժողովոյ Առեւտրայեան եւ միանգամայն փառն անօրէնի երաշխաւորը: Ն. Աղաջար, Առեւտրայեան Տ. Եպիփանեան, հաշուակալ, Ս. Հաճախեան, Գանձապետ, Ա. Այճեան (գետաւորին), ընդհանուր տեսուչ, Ս. Յարութիւնեան (հանդուցեալ), մատակարար, Կ. Փարթեանեան, քարտուղար Ա. Պէրպլեհեան եւ (Մ. Կարապետեան, հանգուցեալ) խորհրդականք:

Սոյն Գործ. վարչութեան կենդանի մի խորհրդականը, յարգելի եւ իր անդուլ գործունէութեամբ ծանօթ անձնատրութիւն մը, մեր տրամադրութեան տակ զնեւու չափ ազնիւ գտնուելով փոռն ընկերութեան շահեկան օգնութիւնները, կարելի էր հոս տեղ ամիսի տեսութիւն մ'ընել, գծել ամէն մէկին համեմատաբար մեծ թէ փոքր պատասխանատուութիւնները, գործուած թերութիւններով (incurie) բառին դատական իմաստով: Բայց, մեր նպատակէն բոլորովին զուրս է մեռած ընկերութեան մը համար աւերաբարձութիւններով զբաղել: Եւ եթէ այս խնդրը շահագրգռելու բնոյթն ունի այս կամ այն interresse անհատներ, կը կարծենք որ «նոր Օր» ի էջերը բաց են իրենց տեղը, պայմանաւ սակայն որ թերթին ծրագրէն չլիզուի. չափ ստաջ չերթան: Փութեանք յարել, որ առաջինը պիտի ըլլանք հաճութեամբ պարզուած տեսութիւնները կարգաւ:

Անա տխուր օրինակներ քեզ, սիրելի՛ ընթերցող, օգտուէ՛ անկէ, եթէ կուզես օգտակար հանգիստնալ անձիդ եւ ազգիդ Աֆրոս, անա ընկերութիւն մը՝ որ տարիներու կանոնաւոր յարատեւութեամբ, ապահովաբար կարենար եթէ ոչ բարեգործականին չափ, գէթ անորմէ քիչ պակաս բարեքներ ընծայել մեր խեղճ ազգին, որուն տեղ, սակայն, կը ցայ ինք ըսել, սնանկութեամբ կազմալուծուած մեծ վնասներ հասուց, իր յաջորդներու ժառանգ թողով միշտ անչեղլի, անփոփոխելի տնաւեր գանձերու, անհամբաշխութիւն, պատակուած, բարոյական թէ նիւթական անանկութիւն . . .

Ուրիշ առթիւ, անգամ մ'եւս Սուտանի անապատէն պիտի գրենք մնացեալ ընկերութիւններու վրայ: Ողջո՛յն ձեզ, սե՛ւ աշխարհի սեւ սարեր, ա՛խ, ա՛լ չ'բուե՛ց հայ անապատարնակին հոգեմայ հառաչանքը. . .

ՎԱՂՈՒԱՆ, ՈՒՂՆԻՈՐԸ

Գահիրէ, 30 Յունիս 1900

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

ԵՒՓՈՒ 26 Յունիս. — Բիւրեւ, Առաջին անգամ Բրիտանական ու Ամերիկեան զինքերն մտան Դիէն-Ջին, Չինացիներուն թնդանօթները լռեցնելէ եւ անոնց կարգերը կտրել անցնելէ վերջը:

ԲԱՆԹՕՆ 26 Յունիս. — Տեյի Թեյեկաճ, Պոքսըրներու եւ ծովահններու ապստամբութեան շարագուշակ նշաններ կան հոս, ընչեղ Չինացիները կ'առաջնորդու փախչիլ:

ՀՈՒՆԿ-ՔՈՒՆԿ 26 Յունիս. — Թայվայ, Լի-Հունկ-Չանկ, Գանթի-Թի եւ նահանգներու ռազմիկ զանազան զատակարգերը կը ջանայ համոզելու որ կազմ ու պատրաստ գտնուին Լի-Հունկ թշնամիները ընկնելու:

ԵՌՔՈՂԱՄԱ 27 Յունիս. — Միքստոն վճիռ մը հանց 15,000,000 ելնի վարկ մը բանալու պիտի որական գործողութեանց համար:

ԼՈՒՏՐԱ 27 Յունիս. — Ստիվը հոս հասաւ նորին Բարձրութիւնը Չէյթինկ-Գրասի կայարանն ընդունուեցաւ ամենամեծ պատերազմի ու յետոյ զնոց Պրոքինկէմ Բայէյս, Եօրթի գլխի ընկերակցութեամբ: Ստիվը թաշտոյլ կ'երկու ու իր հիւանդութեանէն կրէք հետք մը չ'աննուիր:

ՇԱՆԿ-ՉԱՅ 27 Յունիս. — Մովակալ Սրբ է. Սեյ-մուր Թիէն-Չիէն 8 մղոն հեռու կը գտնուի, իր մարդիկներէն 16 սպաննուած ու 200 վիրաւոր թողուով:

ԼՈՒՏՐԱ 28 Յունիս. — Թայվայ կ'իմանայ Լայփն-ձո-Մարթէզէ. Պօլիները մեծաթիւ ուժով քաշուած են Միւտեղուրկէն անդին:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն Ե Ն

ԼԻ-ՀՈՒՆԿ-ՉԱՆԿԻ ԽՈՍՏՈՎԱԼՈՒԹԻՒՆԸ

« Պրուքէլի Սուրհանդակ » ին Պրոքինեան թղթաւիցը այս օրերս հրատարակած է փոխարքայ ու սպարապետ Լի-Հունկ-Չանկի յայտարարութիւնները, գորս ըրած է պարզեղու համար թէ ինչո՛ւ Արեւմտեայք միջամուխ կ'ըլլան չինական գործերուն:

« Տէրութիւններ » Չինը կը նկատեն կարկանդակ մը, որմէ իւրաքանչիւրը կը կարծէ թէ կտոր մը կրնայ բրջնել իր ճաշակին ու քաջաբն համասալ: Բայց կը մոռցուի թէ՛ թիթանօթները չեն կրնար իրաւունք ունենալ երկրի մը ստուգուածքին վրայ: Իրաւունք ժողովրդի կամքին մէջ կը կայանայ: Այսօր Չինացիք կուզեն մնալ Չինացի Մեր մէջ անհատը կ'ապրի իր ընտանիքին համար, իսկ ձեր մէջ՝ Տէրութեան համար կը վստիանք պատերազմներով հետեւ ան՝ կը գտնէ մարդն իրեններէն. եթէ անկեղծ էք, պարտիք խոտովանել թէ՛ Չինաստանի համար մեծ չարք մը պիտի ըլլար, եթէ հոն ալ մուտ գտնէին Արեւմուտքը վերվարչը չընող ընկերային ու տնտեսական ապագայները:

« Անիրա՛ւ ենք մենք, եթէ ուզենք զերծ մնալ արեւմտեան ազգեցութիւնէն: Յիւզէք որ Եւրոպացիներուն հետ մեր յարաբերութեանց սկիզբները, Լիւսան կղզին, մէկ չաբաթուան մէջ 20000 Չինացիներ ջարդուեցան Սպանիացիներէն: Անշուշտ այս կերպ սկզբնաւորութիւնը չը քաջալիրքը գմեղ՝ մեր կայսրութեան գոնեքը բանալու արեւմտեան քաղաքակրթիւններուն: Ինչո՛ւ համար մենք վայրենիներ կը նկատուինք, որովհետեւ ատեն ատեն Չինացիները կստանան եւրոպացի մը: Բայց սպաննութիւններ Եւրոպայի մէջ ալ կը պատահին: Ինչ բազդի պիտի հանդիպէր արդեօք Չինացի մը որ յամառէր հետեւելու ձեր օրէնքներուն գէ՛մ: Ինչ պիտի ընէր ձեր ամբողջ մեր պաշտոյակաւորներուն հետ, եթէ ասոնք փորձէին ձեր մէջ նորահաւասներ ունենալու: Դեռ այսօր ձեր երկիրներուն մէջ, ժողովուրդը, գէթ անուղղակի, ստիպուած է պաշտելու որչա՛կ աստուած մը: Ասի մեր մէջ ի գործ չդրուիր Մենք աւելի ներդաստիւ ենք քան թէ դուք:

« Դայով մեր արտաքին քաղաքականութեան ձեզի պիտի ըսեմ թէ՛ տէրութիւնները կարգաւ մեր վրին կը զնեն դանակը: Անմիջական վտանգի պահուն կը խոտանանք ամեն ինչ որ կը խնդրուի մեզմէ, ազատ ըլլալով գործելու մեր շահերուն համաձայն անգամ մը որ վտանգը վերնայ: Ու այս հնարամտութիւնը չէ՛ (tactique) որուն ամեն ատեն կը հետեւի ամեն երկիրներու զիւանագիտութիւնը: Կը խորհի՞ք թէ, հակառակ Ֆրանսիացի դաշնագրին, Ֆրանսան Գերմանիոյ պիտի թողէր Լորէնն ու Ալզասը, եթէ զանոնք ես անկուր չափ ուժով զգար ինքզինքս: Մենք ալ նոյն կերպով կը վարուինք այն նահանգներուն համար, զորս Եւրոպացիները մեզմէ կը խնեն: Բարեբաղդաբար մենք առանելութիւնն ալ ունինք գիտնալու թէ՛ եւրոպական տէրութիւններուն իրարու հետ ունեցած յարաբերութեանց մէջ անվտանգութիւն, նախանձ ու խարխաւանք կը սիրեն: «Վասն զի, չը մոռնանք, դուք վիրար աւելի կ'ատէք քան թէ մենք զձեզ: Սակայն, անկեղծօրէն խօսելով, դուք, կր զմեզ կը կողոպտէք, չէ՛ք կրնար բարեկամական վարմունք սպասել մեզմէ:

« Հիւսիսը՝ Ռուսներուն, հարաւը՝ Անգլիացիներուն, մնացեալը՝ Ֆրանսացիներուն ու միւսներուն, իսկ Չինացիներուն, ո՛յինչ: Բայց 500 միլիոն մարդիկ յայտն չեն կրնար թալուելու Դժուար չէ մեզ ձեռնելը, բայց մեզի սիրելի դա ուրիշ բան է:

« Մենք ձեզի կուտանք ինչ որ կը խնդրէք, ու ինչ որ դաշնագրիներով խոտապցած էք չ'ընդունէք, ա՛ն ալ կուտանք: Բայց հոգ ե՛ւ տանիք այնպէս ընել որ Անգլիան ձեզի ե՛ւ արգիլէ՛ առնելու ինչ որ խոտապցած ենք: Ու յետոյ, մի՛ մոռնաք որ աննուսնելի կորով մը կ'ողբուրէ մեր ժողովուրդը, կայսրուկին ու իր խորհրդականները: »

